ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 2

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական

խորհրդի 2018թ. հոկտեմբերի 23-ի նիստի

Ներկա էին գիտական խորհրդի 68 անդամներից 60-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի ազգային ագրարային համալսարանի որոշ ամբիոնների միավորման մասին:

Վ.Ուռուտյան

2. Moodle և Mulberry համակարգերի ներդրման ընթացքը համալսարանում:

Վ.Մելքոնյան

3. Ուսանողների հաճախումների վիճակը սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:

Ս.Դավեյան

4. Ընթացիկ հարցեր:

Լսեցին՝ ՀԱԱՀ ռեկտորի պաշտոնակատար Վ.Ուռուտյանը ներկայացրեց գիտական խորհրդի քննարկմանը և հաստատմանը Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի կազմում որոշ ամբիոնների միավորման հարցը:

Առաջարկվեց Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի կազմում հաստատել հետևյալ ամբիոնները՝

- Բարձրագույն մաթեմատիկայի և տեսական մեխանիկայի.
- Ավտոտրակտորների և գյուղատնտեսական մեքենաների՝ միավորելով Ավտոմոբիլների և տրակտորների, Գյուղատնտեսական մեքենաների և Գյուղատնտեսության մեքենաշինության տեխնոլո-գիաների և նորոգման ամբիոնները.
- Գյուղատնտեսության ավտոմատացման և տեխնիկայի շահագործման՝ միավորելով Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման և Գյուղատնտեսության էլեկտրիֆիկացիայի ամբիոնների.
- Կենսագործունեության անվտանգության.

- Մեքենագիտության և գրաֆիկայի՝ միավորելով Գրաֆիկայի և մեքենաների նախագծման հիմունքների և Նյութերի դիմադրության և Ճարտարագիտական կառուցվածքների ամբիոնները.
- Ջրային ռեսուրսների կառավարման - Հիդրոտեխնիկական կառուցվածքների և մելիորացիայի.
- Հողաշինարարության և հողային կադաստրի ամբիոն:

Վերոնշյալ հարցը քննարկվել է ռեկտորատի նիստում և արժանացել է հավանության:

Որոշեցին՝ 1. Հավանություն տալ և հաստատել (միաձայն) Գյուղատնտեսության մեքենայացման և ավտոմոբիլային ըրանսպորտի և Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետների միավորման արդյունքում ստեղծված «Ագրարային ճարտարագիտության» ֆակուլտետի կազմում հետևյալ ամբիոնները՝

- Բարձրագույն մաթեմատիկայի և տեսական մեխանիկայի.
- Ավտոտրակտորների և գյուղատնտեսական մեքենաների.
- Գյուղատնտեսության ավտոմատացման և տեխնիկայի շահագործման.
- Կենսագործունեության անվտանգության.
- Մեքենագիտության և գրաֆիկայի.
- Ջրային ռեսուրսների կառավարման.
- Հողաշինարարության և հողային կադաստրի ամբիոն:

2. Դիմել ՀԱԱՀ Հոգաբարձուների խորհրդին քննարկելու և հաստատելու որոշումը:

Լսեցին՝ ՀԱԱՀ տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն ծրագրերի կենտրոնի տնօրեն-պրեռեկտոր Վ.Մելքոնյանի հաղորդումը «Moodle և Mulberry համակարգերի ներդրման ընթացքը համալսարանում» հարցի վերաբերյալ

/զեկուցումը կցվում է/:

Զեկուցողը ներկայացրեց կատարված գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը: Արձանագրեց,որ իրականացվել են MOODLE համակարգի ծրագրային թարմացման աշխատանքները սերվերային

հատվածի տեխնիկական վերազինումը: Նշեց, որ սեպտեմբերի 20-ից սկսվել է դասախոսական անձնակազմի վերապատրաստման գործընթացը: Իրականացվում են նաև ուսանողներին իրենց մուտքանվան և գաղտնաբառի տրամադրման աշխատանքները:

Գործընթացը առավել մատչելի դարձնելու համար SS կենտրոնի կողմից ստեղծվել է նաև էլեկտրոնային ուսուցման Moodle հարթակի օգտագործման ուղեցույց:

Միաժամանակ արձանագրվեց, որ դասախոսությունների ներդրման գործընթացն ընդանում է ոչ բավարար տեմպերով:

Նշվեց Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդրման համար իրականացվող աշխատանքները:

Արտահայտվեցին՝ Մ.Գալստյանը, Ա.Ոսկանյանը, Ա.Բեգլարյանը:

Ռեկտորի պաշտոնակատար Վ.Ուռուտյանը անդրադարձավ համալսարանում էլեկտրոնային համակարգերի ներդրման աշխատանքների ինտենսիվացման անհրաժեշտությանը: Նշեց, որ 21-րդ դարի երկրորդ տասնամյակն է ավարտվում և անպայման բոլորը պետք է կարողանան աշխատել էլեկտրոնային միջավայրում: Դա շատ կարևոր է բուհ-ի թե հեղինակության, թե միջազգայնացմանը և թե ինստիտուցիոնալ հավատագրման համար:

Որոշեցին՝ Լսելով և քննարկելով հաղորդումը «Moodle և Mulberry համակարգերի ներդրման ընթացքը համալսարանում» հարցը գիտական խորհուրդը միաձայն

որոշում է՝

/որոշումը կցվում է/:

Լսեցին՝ ՀԱԱՀ ուսումնամեթոդական կենտրոնի տնօրեն-պրոռեկտորի պաշտոնակատար Ս.Դավեյանի հաղորդումը «Ուսանողների հաճախումների վիճակը 2018թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին»:

/զեկուցումը կցվում է/:

Զեկուցողը նշեց, որ ուսանողների հաճախումների հարցը գտնվում է համալսարանի ամենօրյա ուշադրության կենտրոնում: Համալսարանում

մեծածավալ աշխատանքներ են տարվում ուսանողների հաճախումների բարձր ցուցանիշ ապահովելու համար: Սակայն դասաձախողումների բացառման, ուսանողների անհարգելի բացակայությունների նվազեցման համար դեռևս շատ անելիքներ կան:

Արտահայտվեցին՝ Հ.Հարությունյանը, Հ.Հովսեփյանը, Օ.Քամալսանը, Ա.Աղասարյանը, Ա.Աղաբաբյանը, Ա.Ոսկանյանը: Նրանք փորցեցին պարզել արձանագրված հաճախումների ցածր արդյունքների պատճարները:

Ռեկտորի պաշտոնակատար Վ.Ուռուտյանը ամփոփելով քննարկվող հարցը, նշեց, որ պետք է աշխատել ուսանողական խորհրդի հետ և պարզել այն դասախոսներին, որոնք նվիրված չեն իրենց առարկային, պարզել անհարգելի բացակայությունների, դասաձախողումների պատճարները: Դասերը պետք է հետաքրքիր դարձնել և աշխատանք տանել ուսումնական պրոցեսը արդիականացնելու ուղղությամբ: Ուսանողի և դասախոսի հարաբերությունները պետք է լինեն էթիկայի նորմերի սահմաններում, այլ վերաբերմունքը անհանդուրժելի է: Էթիկայի նորմերը համալսարանում պետք է լինեն բարձր մակարդակի վրա, իսկ մարդկային հարաբերությունները օրինակելի:

Որոշեցին՝ Լսելով և քննարկելով «Ուսանողների հաճախումների վիճակը 2018թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին» հարցը, գիտական խորհուրդը միաձայն

ո ր ո շ ում է՝

/որոշումը կցվում է/:

Լսեցին՝ ՀԱԱՀ ռեկտորի պաշտոնակատար Վ.Ուռուտյանը տեղեկացրեց ներկաներին «Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն»-ի վերակազմավորման անհրաժեշտության մասին՝ թե արդյունավետության և թե կառավարման տեսանկյունից: Միաժամանակ նշելով, որ այն շատ կարևոր ռազմավարական կենտրոն է երկրի համար:

Եղավ առաջարկություն՝

1.Տնտեսությունները առավել դարձնելու նպատակով «Բալահովիտի» և «Ոսկեհատի» ուսումնափորձնական տբտեսությունները տարանջատել,

քանզի դրանք համադրելի չեն և պահանջում են կառավարման առանձնահատուկ լուծումներ:

2. «Ոսկեհատը» ինտեգրել «Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն»-ի մեջ և գիտական կենտրոնը տեղափոխել Ոսկեհատ, որտեղ փորձարարական-գիտահետազոտական աշխատանքների համար կան բարենպաստ պայմաններ: Նորաստեղծ միավորը անվանել «Ոսկեհատի խաղողագինեգործական գիտական կենտրոն»: Ոսկեհատը լավ բրենդ է:

Որոշեցին՝ Հավանություն տալ առաջարկությանը և հաստատել «Ոսկեհատի խաղողագինեգործական գիտական կենտրոն»-ի ստեղծումը:

2. Դիմել ՀԱԱՀ Հոգաբարձուների խորհրդին հաստատելու որոշումը: Մերձավանում և Նալբանդյան գյուղում գտնվող ՀԱԱՀ-ին պատկանող տնտկարանների համար կստեղծվի նոր ուղղվածությամբ բիզնես ծրագիր:

Լսեցին՝ ՀԱԱՀ-ի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, Ռ.Մակարյանի հաղորդումը ՀԱԱՀ-ի ֆակուլտետների գերազանց առաջադիմություն ունեցող ուսանողներին 2018-2019 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում անվանական կրթաթոշակ հատկացնելու վերաբերյալ:

Որոշեցին՝ 2018-2019 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում անվանական կրթաթոշակ հատկացնել ՀԱԱՀ-ի ֆակուլտետների հետևյալ ուսանողներին՝

Ագրոնոմիական ֆակուլտետ

Ղարախանյան Կարեն Արթուրի	ԱԷ - 4	Ակադեմիկոս Գ.Խ.Աղաջանյանի
Պետրոսյան Աննա Արտաշի	ՊԳՏ - 3	Ակադեմիկոս Ա.Գ.Թումանյանի

Ագրոբիզիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետ

Երեմյան Կատերինա Արմենի	ԱԳ - 4	Բ.Մարտիրոսյան անվան
Ավետիսյան Հովհաննես Եգորի	ԱՔ - 5	ՀԱԱՀ գիտ խորհրդի անվան

Տնտեսագիտական ֆակուլտետ

Նազարյան Ռիմա Ավետիքի	ՖԿ - 4	Անտոն Քոչինյանի անվան
Ավետիսյան Ռիմա Հրաչիկի	ՀՀ և Ա - 4	Անդրանիկ Մարգարյանի անվ.

Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի

ֆակուլտետ

Ավետյան Արման Ալեքսանդրի	ՄՋ - 3	Իվան Վասիլի Եղիազարովի անվան
Ղազարյան Արտակ Արմենի	ՀՇ - 4	Աղասի Ղևոնդի Խանջյանի անվ

Գյուղ. մեքենայացման և ավտոմոբիլային տրանսպորտի ֆակուլտետ

Էլբակյան Վոլոդյա Լեոնիկի	ՃԵԿ- 4	Պրոֆ. Ս.Սահակյանի անվ.
Մելիտոսյան Ալբերտ Վարդանի	ՃԵԿ - 5	Պրոֆ. Հ.Մաքսապետյանի անվ.
Ավետիսյան Տիգրան Լևոնի	ԷԼ - 5	Ակադեմ.Ա.Մաթևոսյանի անվ.

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետ

Միրզաբեկյան Սեդա Ալեքսանդրի	ՊՓ - 4	Զ.Խ.Դիլանյանի անվան
Մովսիսյան Եվգինե Կարենի	ՏՓԹ - 4	Վ.Ե.Թաիրովի անվան

Անասնաբուժական-բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետ

Հակոբյան Սիլվա Սամվելի	Անասնաբուծություն – 5 կուրս	Ակադեմ. Ա.Զ.Թամամշևի անվ.
Ամիրջանյան Նունե Արայի	ԱՍՓ - 5	Ակադեմ. Ա.Ա.Ռուխկյանի անվ.

Լսեցին՝ Տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Արման Ռոբերտի Սիմոնյանի Ե.05.01 «Ավտոմեքենաներ և տրակտորներ» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններ ղեկավարելու թույլտվության հարցը:

Որոշեցին՝ Թույլատրել տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Արման Ռոբերտի Սիմոնյանին թեկնածուական ատենախոսությունների ղեկավարումը Ե.05.01 «Ավտոմեքենաներ և տրակտորներ» մասնագիտությամբ:

Լսեցին՝ Հիդրոտեխնիկական կառուցվածքների և մելիորացիայի ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Արգիշտի Գուրգենի Եղիազարյանի

թեկնածուական ատենախոսության մասնագիտության փոփոխման հարցը:

Որոշեցին՝ Հաշվի առնելով հիդրոտեխնիկական կառուցվածքների և մելիորացիայի ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Արգիշտի Գուրգենի Եղիազարյանի «Արարատյան դաշտի հողերի աղակալման մոնիտորինգ» վերնագրով թեկնածուական ատենախոսության բովանդակությունը, այն հաստատել Զ.01.01 «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ագրոքիմիա» մասնագիտությամբ:

Լսեցին՝ Բուսաբուծության և բանջարաբուծության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Տաթևիկ Բաբկենի Ալոյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Որոշեցին՝ Հաստատել բուսաբուծության և բանջարաբուծության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Տաթևիկ Բաբկենի Ալոյանի թեկնածուական ատենախոսության թեման «Հայաստանում տարածված ճակնդեղի (Beta L.) վայրի տեսակների և պոպուլյացիոն սորտերի գենետիկական բնութագիրը, որպես սելեկցիոն ելանյութ» վերնագրով, Զ.01.02 «Բուսաբուծություն, խաղողագործություն, պտղաբուծություն և բույսերի պաշտպանություն» մասնագիտությամբ, գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Գիտական ղեկավար նշանակել գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Շ.Մելիքյանին:

Լսեցին՝ Շուշիի տեխնոլոգիական համալսարանի հայցորդ Անդրանիկ Հակոբյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Որոշեցին՝ Հաստատել Շուշիի տեխնոլոգիական համալսարանի հայցորդ Անդրանիկ Հակոբյանի թեկնածուական ատենախոսության թեման «Բնական գազով տրակտորային դիզելային շարժիչների աշխատանքը բարձրադիր

գոտիներում և բարելավման ուղղությունները» վերնագրով, Ե.05.01 «Ավտոմեքենաներ և տրակտորներ» մասնագիտությամբ:

Գիտական ղեկավար նշանակել տեխնիկական գիտությունների դոկտոր, դոցենտ Ս.Ա.Կոխլիկյանին:

Լսեցին՝ ՀԱԱՀ-ի Լեզվի կենտրոնի տնօրեն Ռ.Շահինյանի առաջարկությունը համալսարանի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի օտար լեզուների իմացության մակարդակը բարձրացնելու նպատակով սույն թվականի նոյեմբերի 9-ից սկսած կազմակերպել օտար լեզուների (անգլերեն) դասընթացներ՝ չուրս փուլով (մակարդակով), յուրաքանչյուրի տևողությունը սահմանելով երկու ամիս:

Արտահայտվեցին՝ Ս.Դավեյանը, Ռ.Մանուկյանը, Ա.Ոսկանյանը, Ա.Վարդանյանը, որոնք հավանություն տվեցին առաջարկությանը:

Որոշեցին՝ Լսելով և քննարկելով Լեզվի կենտրոնի տնօրեն Ռ.Ծահինյանի առաջարկությունը, գիտական խորհուրդը միաձայն

որոշում է՝

/որոշումը կցվում է/:

Գիտխորհրդի նախագահ Վ.Ուռուտյան

Գիտքարտուղար Դ.Ս.Բալասանյան